

2000 դրամ անվանական արժեքով թղթադրամ



Թղթադրամի վրա պատկերված է Տիգրան Պետրոսյանը (1929-1984), շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն, շախմատային տեսաբան և վերլուծաբան: Նրա խաղացած բազմաթիվ պարտիաները տեղ են գտել շախմատի դասագրքերում: Գրել է «Շախմատը և փիլիսոփայությունը» աշխատությունը:



Պաշտպանական հատկանիշներ

Հուճք

Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հուճքի վրա, որը բամբակե թուղթ է, երկու կողմերից պատված պոլիէսթերի շերտով:

1. Ջրանիշ

- Թղթադրամի վրա ներկայացված անձի դիմապատկերն արտացոլող բազմերանգ ջրանիշ,
- Թղթադրամի անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ:




2. Թափանցիկ պատուհան

Ձևավորման տարրի հստակ պատկերով թափանցիկ պատուհան:




3. Պաշտպանական մանրաթելեր

Թղթադրամի հուճքի մեջ ներառված են տեսանելի և անտեսանելի (ուլտրամանուշակագույն լույսի ներքո լուսածորող) մանրաթելեր:



4. Պաշտպանական ներգիծ

Պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը և անվանական արժեքն արտահայտող թվի ապամետաղականացված գրառումը:



5. Խոր տպագրություն

Թղթադրամի դիմերեսին որոշ պատկերներ տպագրված են խոր տպագրության եղանակով՝ ունեն բարձր մակերես և հստակ շոշափվում են.

- դիմանկարը,
- դիմանկարի շուրջ պատկերները,
- թղթադրամի անվանական արժեքն արտահայտող թվանշանները,
- թղթադրամի անվանական արժեքն արտահայտող բառերը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը,
- Տկարատեսների համար նախատեսված հատկանիշը:



6. Անհատական համարանիշ

Տեղադրված է թղթադրամի դիմերեսի ձախ և աջ հատվածներում. բաղկացած է սև գույնով տպագրված երկու տառից (թղթադրամի սերիան) և ութ թվանշանից (թղթադրամի համարը).

- ձախ հատվածում գտնվող համարանիշը ուղղահայաց է,
- աջ հատվածում գտնվող համարանիշը հորիզոնական է:



7. Օպտիկապես փոփոխական ներկ

Օպտիկապես փոփոխական ներկով է տպագրված թղթադրամի դիմերեսի պաշտպանական հատկանիշը, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը կրկնող և հորիզոնական «լողացող» 3D վառ տարրեր:



8. Մանրատառաշար և մանրապատկերներ

Թղթադրամի դիմերեսին և դարձերեսին առկա են մանրատառաշար և մանրապատկերներ, որոնք տեսանելի են միայն խոշորացուցով.

Դիմերես

մանրատառաշար, որը բաղկացած է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումից և անվանական արժեքից՝ թվային և տառային արտահայտությամբ,

- մանրապատկերներ, որոնք կրկնում են 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը,

Դարձերես

- հորիզոնական մանրատառաշար, որը բաղկացած է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումից և անվանական արժեքից՝ թվային և տառային արտահայտությամբ,

- մանրատառաշար, որը կազմված է թղթադրամի վրա ներկայացված անձի անուն-ազգանունից,
- մանրապատկերներ, որոնք կրկնում են 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը:



9. Երկգույն մարգարտափայլ տպագրություն

Թղթադրամի դարձերեսին առկա է երկգույն մարգարտափայլ ժապավեն:



10. Ուլտրամանուշակագույն հատկանիշ

Թղթադրամի դիմերեսին և դարձերեսին առկա են լուսածորող ներկով տպագրված մասեր, որոնք տեսանելի են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո.

Դիմերես

- անվանական արժեքն արտահայտող թիվը,
- ձևավորման տարրը,
- անհատական համարանիշը,

Դարձերես

- հուշարձանը,
- հետին պլանը:

